Մրցույթ՝ «Վանաձոր համայնքի թիվ 35 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի (1,12 դրույքաչափ) թափուր պաշտոնի համար

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ, կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում (Ձև 1)՝ լրացվում է տեղում
2. Կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 4)՝ ստանալ https://escs.am/am/news/11978 հղումից
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են հրապարակման օրվանից մինչև մայիսի 15-ը ներառյալ, ամեն օր ժամը 08:30-ից 17:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթն անց է կացվելու 2024 թվականի մայիսի 20-ին ժամը 12:00-ին ք. Վանաձոր Տարոն 4, Աձխահատներ 33 հասցեում (թիվ 35 մսուր-մանկապարտեզի շենք):

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են հայտարարությանը հետևել նաև www. azdarar.am կայքով:

Մրցույթն անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով https://escs.am/am/news/11978

Տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով 094440696: